

ՖԵԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿՑ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ա. Գ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ծնթական և ստորոգյալը, ավելի ճիշտ՝ դրանց կապակցությունը կազմում է նախադասության կառուցվածքային հիմքը: Համենայն դեպս, դա այդպես է երկկազմ նախադասության մեջ: Ինչ վերաբերում է միակազմ նախադասությանը, ապա այն, նախ, անհամեմատ փոքր կշիռ ունի շարահյուսական կառուցվածքի համակարգում և, երկրորդ, կարելի է ասել, որ նրա ընկալումը զգալի չափով կատարվում է երկկազմի հիմքի վրա, նրա հետ զուգորդման հիման վրա: Պատահական չէ, որ նախադասության քերականական կարգերը հիմնականում հանդես են գալիս ենթակայի և ստորոգյալի կապակցության մեջ: Այդ կարգերից է համաձայնությունը, որը, ինչպես հայտնի է, կատարվում է դեմքով ու թվով: Համաձայնությունը, որպես քերականական կարգ, այնքան կարևոր է, որ, այն բնականաբար, շարահյուսության ամեն մի դասագրքում էլ քննվել ու քննվում է: Նկատի ունենալով, որ ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնությունը հանգամանորեն քննված է, և նրանում չկան տարակարծությունների տեղիք տվող երևույթներ, ուստի անդրադառնանք ժամանակակից հայերենում ենթակայի ու ստորոգյալի թվային համաձայնությանը:

Համաձայնությունը նախադասության անդամների կապակցման եղանակ է. այն դրսևորվում է նրանով, որ իրար հետ կապված անդամներն ստանում են միևնույն քերականական կարգը, ուրեմն և՛ համապատասխան քերականական ձևավորում: Հին հայերենի համեմատությամբ ժամանակակից հայերենում կապակցման այս եղանակը զգալի չափով սահմանափակել է իր ոլորտը: Ժամանակակից հայերենում ամենաբնորոշը ենթակայի և ստորոգյալի համաձայնությունն է. դրա հիմքում ընկած է այն իրողությունը, որ ստորոգյալը ենթակայի էության կամ նրա որևէ էական հատկանիշի դրսևորումն է, որը ենթակային է վերագրվում դեմքով: Եվ բնական է, որ այդ կապակցության բաղադրիչները՝ ենթական ու ստորոգյալը, պետք է համապատասխանեն միմյանց: Դրա հետ միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ համաձայնությունն ունի շատ յուրահատկություններ, տատանումներ՝ պայմանավորված տարրեր հանգամանքներով: Ծնթակայի և ստորոգյալի համաձայնության վերաբերյալ կարևոր դիտողությունների ենք հանդիպում հայերենի շարահյուսությանը նվիրված մի շարք աշխատություններում¹:

Ծնթակայի և ստորոգյալի թվային համաձայնության ամենաընդհանուր և հայտնի օրինաչափությունն այն է, որ եզակի ենթակայի հետ սովորաբար դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ: Ինչպես՝ «Արևը բավական բարձրացել էր, ցողի կաթիլները զուրըշիացել էին» (ԱՐ, 149):

¹ Տե՛ս, օրինակ, Ս. Պալասյան, Քերականություն մայրենի լեզվի (մաս Ա, Բ, Գ), Քիֆիզ, 1894, Մ. Արեղյան, Երկեր, հ. 2, Երևան, 1974, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Երևան, 1958, Ս. Արրահամյան, Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956, Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսություն հիմունքները, Երևան, 1974, Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Երևան, 1986, Ս. Գյուլրուդադյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1988:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հավաքական գոյականները, որոնք ձևով եզակի են, սակայն ունեն բազմակիության իմաստ, նրանց համաձայնությունը որպես օրինաչափություն կատարվում է ձևային կողմով, այսինքն՝ ունենում են եզակի թվով ստորոգյալ։ Արեղյանը այս երևույթն անվանում է բակառություն²։ Այդպիսիք են՝ ժողովուրդ, բազմություն, երգչախումբ բառերը և այլն։ Օրինակ՝ «Հայ ժողովուրդը ապրել է, հայ ժողովուրդը ապրում է, հայ ժողովուրդը պիտի ապրի» (ՍԿ, 44)։ «Բազմությունը լուռ լսում էր» (ԱԲ, 156)։

Հավաքական գոյականով արտահայտված եզակի ենթակայի հետ հոգնակի ստորոգյալի գործածությունը, որ անցյալում հանդիպում էր հատկապես գեղարվեստական խոսքում, բարբառայնության արտահայտություն է և դրական հայերենի արդի փուլում կանոնական չէ։ Այս տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում մաս հավաքական գոյականը³։ Մաս ցույց տվող հավաքական գոյական ենթական ունենում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով ստորոգյալներ, բայց օրինաչափականը, առավել սովորականը նման դեպքում եզակի ստորոգյալն է։ Օրինակ՝ «Շարքի գործերի մի մասը նվիրված է Հայաստանին, մյուսը՝ Ղարաբաղին» (ԳԹ, 22. IV. 1988)։ «Բերալի գնդերի մի մասն ասպատակում էր Վասպուրականի այս ու այն անկյունը» (ՀԽՍ, 56)։ «Ի դեպ, ջրի պաշարների մեծ մասը մնում է անօգտագործելի» (ՍՀ, 16. IV. 1988)։ Երբ հավաքական գոյական ենթակայի որոշիչը կամ հատկացուցիչը և ստորոգյալին շեղում են հավաքականության քանակական կողմը, ապա ստորոգյալը սովորաբար դրվում է հոգնակի թվով։ Օրինակ՝ «Մեծ մասը ակնահաճո տեսքով երեխաներ էին» (ՀԽՍ, 68)։ «Իսկ մեր խոսակցության գերակշիռ մասը մեր «ֆարադեյներն» ու «նյուտոններն» են» (ՍԳ, 1988, № 1, էջ 137)։ «Երկնային լուսատուներին վերաբերող տեղեկությունների ճշող մեծամասնությունը, ինչպես և պետք էր սպասել, վերաբերում են Արեգակին և Լուսնին» (ՊԲՀ, 1986, № 4, էջ 164)։ «Նրանց մեծամասնությունը Արևմտյան Հայաստանում ծնվածների սերունդներն են» (ՍՀ, 1988, № 3, էջ 7)։

Ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում զգալի դեր է կատարում թվական որոշիչը։ Մեկից բարձր թվական որոշիչով ենթակա գոյականական կապակցությունը կարող է ունենալ և՛ եզակի, և՛ հոգնակի ստորոգյալներ, ինչպես նկատել են Մ. Արեղյանը, Գ. Զահուկյանը, Վ. Առաքելյանը⁴։ Օրինակ՝ «Մամուտ քարի վրա երկու փեղեր էր ընկած, դեղնագույն-սև պուտերով, իսկ թփի շոր ճյուղերին՝ արյան կաթիլներ» (ԱԲ, 81)։ «Այդ գիշեր ամրոցից դուրս կգա երկու լաստանավ» (ՀԽՍ, 67)։ Բայց ժողովրդափոխակցական լեզվում հանդիպում են նաև այնպիսի կառույցներ, որոնցում մեկից բարձր թվական որոշիչը ունենում է անորոշ առումով ենթակա, որի հետ գործածվում է հոգնակի ստորոգյալ։ Ինչպես՝ «Դասարանից ճամբար գնացին հինգ երեխա»։ Թվական որոշիչով որոշյալ առումով դրված եզակի գոյակների հետ սովորաբար հոգնակի ստորոգյալ է լինում։ Օրինակ՝ «Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում էր, որ երկու ձիավորը քաղաքի մարդիկ են» (ԱԲ, 180)։

Ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում հաճախ մեծ դեր է կատարում կառույցի ձևային կողմը։ Եթե եզակի ենթակայի գործողությունը մասնակից է նաև մեկ ուրիշը, և դա արտահայտված է սեռական հոլովածակի և ճեղ կապի մեղոցով, ստորոգյալը դրվում է եզակի թվով⁵։ Օրինակ՝ «Այդ օրը ես նրա հետ գտմը գնացի կովերին խոտ ու դարման տալու»

² Տե՛ս Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 408։

³ Այս մասին մանրամասն տե՛ս Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 123—124։

⁴ Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 410, Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 418, Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 244—250։

⁵ Ս. Պալասանյան, նշվ. աշխ., էջ 192։

(ԱԲ, 155): Թեև ճեղ կապով կապվող բառով նշվում է գործողություն կատարող այլ առարկա (կամ առարկաներ), բայց դա չի ազդում ենթակայի և ստորոգյալի համաձայնության վրա, քանի որ այդ առարկայի անունը չի դրվում ենթակայի պաշտոնով և ուրեմն չի ազդում ենթակայի թվային հատկանիշի վրա: Իսկ առօրյա խոսքում ստորոգյալը նման դեպքերում երբեմն գրվում է հոգնակի թվով: Այս հարցում դեր է կատարում այն տրամաբանական հիմունքը, որ միասնության պարագայի ցույց տված առարկան նույնպես կատարում է գործողություն (ինչպես ենթական), թեև լրացում է: Օրինակ՝ «Ծն ընկերուհուս հետ կինո գնացինք»:

Ստորոգյալը սովորաբար դրվում է եզակի թվով, երբ նրա հոգնակի ենթական մեկ առարկայի անվանում է⁶, ինչպես՝ «Պաշտոնյանի Քաղաքավարության վնասները» իսկույն սպառվեց»: «Ամերիկայի Միացյալ Նահանգները զարգացած երկիր է»: Բայց՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգները պարտադրում են իրենց քաղաքականությունը»:

Ինչպես նկատել է Ս. Աբրահամյանը, եզակի ենթակայի հետ սովորաբար հոգնակի ստորոգյալ է գործածվում, երբ ենթական արտահայտված է ա, դ, դիմորդ հոդ ունեցող դերանուններով, թվականներով և որոշ ածականներով՝ յուրաքանչյուրս, յուրաքանչյուրդ, ոչ մեկս, ոչ մեկդ, երկուսս, երեքս, չորսս, շատերս, քչերս և այլն⁷: Օրինակ՝ «Ոչ մեկս չկարողացանք փրկել նրան»: «Երկուսս գնացինք դեպքի վայրը»:

Երբ ստացական հոդով հոգնակի ենթակայի հոգնակիությունը իրականում վերաբերում է ենթադրվող հատկացուցչին, ստորոգյալը դրվում է եզակի թվով. «Գլուխներս ցավեց»: Այս օրինակում (և նման դեպքերում) գլուխը կարող է հասկացվել ոչ բուն առարկայական իմաստով, որի դեպքում ավելի հավանական կլինե՞ր «Գլուխներս ցավեցին» կառույցը: Այդ արտահայտությունը կարող է պարզապես նշանակել «անհանգստություն ապրել», «անհանգստանալ», և այդ պատճառով էլ տրամաբանորեն հնարավոր է դառնում, որ գլուխներս ենթակայի հետ գործածվի եզակի ստորոգյալ:

Հետաքրքրական է մի շարք դերանուն ենթակաների և ստորոգյալների համաձայնությունը՝ պայմանավորված այդ դերանունների իմաստային յուրահատկություններով: Համաձայնական յուրահատկություն հանդես բերող դերանունները կարելի է բաժանել երեք խմբի՝ միայն եզակի իմաստով գործածվող դերանուններ (այս, այդ, այն, սույն, նույն, յուրաքանչյուր և այլն), միայն հոգնակի իմաստով գործածվող դերանուններ (բոլորը, ամենքը, միմյանց, իրար, մեկմեկու | մեկմեկի և այլն) և եզակի ու հոգնակի թիվ ունեցող դերանուններ (ես, դու, ինքս, ինքդ, սա, դա, նա և այլն): Բացի այս հիմնական խմբերից, կան իմաստային երկակիություններ գործածվող դերանուններ՝ այսքան, այդքան, նույնքան, որքան և այլն⁸: Քանիսը հաճախ դրվում է հոգնակի թվով, երբեմն էլ՝ եզակի: Օրինակ՝ «Քանիսը մնացին տեղում»: «Քանիսը գնաց»:

Որոշ դեպքերում ենթակայի ու ստորոգյալի թվային համաձայնության հարցում որոշակի դեր է կատարում ենթակայի լրացումը և հատկապես որոշիչը՝ իր իմաստային յուրահատկության պատճառով: Այսպես, «Յուրաքանչյուր մայր ու երեխա մոտենում էր դասդեկին»: «Ամեն մի աշակերտ և աշակերտուհի պետք է համազգեստ ունենա»: Այս դերանուն որոշիչների հարցում դեր է կատարում այն հանգամանքը, որ դրանք ունեն եզակիության իմաստ և, որպես որոշյալ դերանուն, առարկաների քանակական ամբողջությունն արտահայտում են վերջինիս մեջ մտնող առանձին առարկաները նշելով: Հենց այս առանձին իմաստն էլ պայմանավորում է եզակիության հանգամանքը:

⁶ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 197—198,

⁷ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 60—66,

⁸ Այս մասին տե՛ս նույն տեղում, էջ 193:

Երբ բազմակի ենթակաները կապված են կամ, ոչ շաղկապներով, ունենում են եզակի ստորոգյալ: Օրինակ՝ «Գիրքը վերցրել է կամ Արմենը, կամ Անին»: «Դասը ոչ Արան գիտեր, ոչ Հասմիկը»:

Որոշ բայերի հարակատար դերբայը գոյականաբար գործածվելիս կարող է ունենալ հավաքական իմաստ, այդ դեպքում նրա հետ դրված ստորոգյալը և նրա գոյական վերադիրը կարող են դրվել հոգնակի թվով: Օրինակ՝ «Մնացածը ժողովրդական հեքիաթներ են՝ խառնված, աղավաղված...» (ՀԼԳԴ, 1987, № 5, էջ 54): Մեացած-ը գոյականաբար գործածվելիս՝ ոչ հավաքական իմաստով կարող է ունենալ նաև եզակի թվով դրված ստորոգյալ: «Դրսում մնացածը թրջվել էր անձրևից»:

Ինչպես հայտնի է, բազմակի ենթակայի հետ սովորաբար դրվում է հոգնակի ստորոգյալ: Օրինակ՝ «Գազն ու հարշափը որոշեցին կիրճն անցնել գիշերով» (ՀԽՎ, 167): Երբ բազմակի ենթակաները իմաստով մոտ են և միասին արտահայտում են մեկ հասկացություն, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝ «Մի անհուն դառնություն և կսկիծ ավերեց նրա շքնաղօրը» (ԱԲ, 81): «Մեզ համար չկա ետդարձ ու տունդարձ» (ՀԽԽ, 66): Բայց իմաստով մոտ բազմակի ենթակաները կարող են դիտվել որպես իրարից տարբեր ինքնակա երևույթներ, այդ դեպքում ստորոգյալը դրվում է հոգնակի թվով, ինչպես՝ «Ուրախությունն ու հրճվանքը խենթության հարազատ եղբայրներ են» (ՀԽԽ, 144):

Ստորոգյալը կարող է դրվել եզակի թվով, երբ բազմակի ենթակաները իմաստով մոտ չեն, սակայն արտահայտում են մեկ հասկացություն կամ ունեն հատկացուցիչ, որն ընդհատում է առաջացրել ենթակաների և ստորոգյալի միջև: Ինչպես՝

Առաջին անգամ աշխարհում տեսած
Իմ առավոտն է այնտեղ մնացել,
Երկինք ու բարդի, ճառագայթ ու լաց,
Իմ հողի հոտն է այնտեղ մնացել... (ՎԴ, 16):

Այստեղ, բացի այն, որ երկինք, բարդի, ճառագայթ, լաց, հոտ ծննդավայրի իմաստ ունեն, նկատելի է, որ հոտ ենթական իր հատկացուցիչներով առանձնացել է բազմակի ենթականերից, այդ պատճառով էլ ստացել է եզակի ստորոգյալ:

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել բազմակի ենթակաների հետ եզակի ստորոգյալի գործածությունը, ինչպես՝ «Արդարն ու մեղավորը հավասար նժարների վրա դրվեց»: Սա գրական լեզվի կանոնների խախտում է: Ծիշողը հոգնակի ձևն է:

Երբ ստորոգյալը բազմակի ենթականերից նախադաս է, և գործողությունը կատարվում է անշատ-անշատ, ոչ միաժամանակ, այլ հաջորդաբար, ստորոգյալը սովորաբար դրվում է եզակի թվով՝ «Երևաց հեքիաթային արեւվածազն ու մայրամուտը» (ՀԽՎ, 166): Վերացական գոյականներով բազմակի ենթակայի նախադաս ստորոգյալը կարող է գրվել եզակի կամ հոգնակի թվով: Օրինակ՝ «Կար միայն երգ, կարոտ, սիրո արցունք ու խինդ...» (ՍԿ, 219): «Հեքիմաբյանը խելագարություն չի խաղում, չկա հիվանդագին, աննորմալ ջարժումներ, քայլվածք, խելացնոր հայացք» (ԳԹ, 3: ՎԻ. 1988): «Մեզ համակեց հրճվանք, ոգևորություն, վերագտած ազատության մի զգացում, որ մոտ էր էֆորիայի» (ԳԹ, 3: ՎԻ. 1988): Մեր կարծիքով բազմակի ենթակաների հետ նախադաս ստորոգյալը նույնպես ցանկալի է դնել հոգնակի թվով՝ հանուն միօրինակության և պարզության:

Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ առարկա ցույց տվող բառով արտահայտված ստորոգյալին կարող է դրվել եզակի կամ հոգնակի թվով: Ստորոգյալին դրվում է հոգնակի թվով, երբ հոգնակի կամ բազմակի ենթակայի ստորոգյալի մեջ ընդգծվում է հոգնակիության գաղափարը: Նման դեպքերում ստորոգյալին կարող է ունենալ ածական որոշիչ: Օրինակ՝ «Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ,

ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանիշակը» (ԱՌ, 75): «Նրանք անօթեան մարդիկ են»: Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ ստորոգելին դրվում է եզակի, եթե նրանում շեշտվում է գնահատման իմաստը. «Մենք մարդ ենք, չենք կարող նրանց նման վարվել»: «Աստծու բանտն են տաճարներ-աշխարհքներում բովանդակ» (ՀԹ, 75): «Գույները հաճախ հանգույց են, կապանք, ու շի տարբերվում պարզը խրթինից» (Գ, 1988, № 1, էջ 93): Հոգնակի ենթակայի հետ գնահատող իմաստ ունեցող ստորոգելին կարող է դրվել հոգնակի թվով, եթե նրանում շեշտված է հոգնակիության գաղափարը: Օրինակ՝ «Գրքերը մարդկության հիշողությունը գնահատող անառիկ ամբողջներ են» (ՀԽՆ, 113): Այս դեպքում շեշտվում է այն միտքը, որ ամեն մի գիրք մի ամբողջ է: Սա հետաքրքիր է այն առումով, որ թվի գաղափարով արտահայտվում է խոսողի գնահատողական վերաբերմունքը: Կամ՝ «Հայ միջնադարյան մեղեգիները ջարուհակական զարգացման երկարատև ճամփա անցած մշակութային արժեքներ են» (ՍՀ, 4. IV. 1988):

Աբեղյանը գրում է, որ օվ հարցական գերանվան հոգնակի ձևը քիչ է գործածվում, սովորաբար եզակի ձևով է դրվում՝ իբրև ստորոգյալ: Բերում է հետևյալ օրինակը. «Ո՞վ են այն տղան ու աղջիկը»⁹: Անշուշտ, Մ. Աբեղյանն այսպիսի հարցում չէր կարող սխալվել, պարզապես այն ժամանակ երևույթին չադպես էր, ինչպես նշում է նա: Այս և այլ կարգի երևույթները ցույց են տալիս, որ գրական հայերենի օրինաչափությունները (տվյալ դեպքում՝ ենթակայի ու ստորոգյալի համաձայնության հարցում) գնալով ավելի են կայունանում և ստանում համապարփակ բնույթ:

Հարգական հոգնակիով արտահայտված ենթակայի ստորոգելին դրվում է եզակի թվով, այնպես որ թվային համաձայնությունը իրացվում է միայն հանգուցյով: Օրինակ՝ «Դուք մեր ժողովրդի արժանի զավակն եք»: Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ քանակական թվական ստորոգելին եզակի թվով է դրվում. «Ծրկու հարյուր հազար էին նրանք» (ԳԹ, 20. V. 1988): «1980 թվականին դրանք ընդամենը 78-ն էին, իսկ 1985 թվականին՝ 178-ը» (Ա, 1986, № 1, էջ 16):

Ստորոգելի քերականական թվի հարցում որոշ դեր է կատարում նրա որոշիչն՝ իր իմաստային հատկանիշով: Հոգնակի ենթական կարող է ունենալ եզակի ստորոգելի, եթե վերջինս ունի եզակիության իմաստ արտահայտող որոշիչ: Օրինակ՝ «Նրա հոյակապ տները, որ հպարտ ճակատներով կանգնած էին քաղաքի կենտրոնական փողոցներում, մի-մի փուշ էին դարձել քաղաքացիների աչքում» (Շ, 4): Մի-մի որոշիչը նշանակում է «մեկական»։ Հոգնակի ենթակայի հետ մեկից բարձր քանակական թվական որոշիչ ունեցող ստորոգելին դրվում է հոգնակի ու եզակի թվերով: Ինչպես՝ «Խոսողները երկու բյուզանդացիներ էին» (ՀԽՆ, 162): «Ծրագողները շորս երեխա էին»:

Հոգնակի կամ բազմակի ենթական սովորաբար հոգնակի ստորոգելի է ունենում, եթե ստորոգելին ունի որոշիչ կամ հատկացուցիչ լրացումներ: Օրինակ՝ «Մազերը սևաթույր ողկույզներ էին» (ՀԽՆ, 4): «Գետակի ակունքները անտառի մթին ձորերի աղբյուրներ էին» (ԱՌ, 154): Բայց՝ «Խնքը ցեղասպանության լուրն առավ ուրիշ ականատեսներից, որոնք իրենց տան մշտական հյուրն էին...» (ԳԹ, 14. X. 1988):

Ենթակայի և ստորոգյալի կապակցության մեջ կան համաձայնությանը վերաբերող շատ այլ ուշագրավ երևույթներ: Դրանցից հատկապես նշելի է այն, որ եզակի ենթակայի հետ, որը նաև հավաքական գոյական չէ, կարող է օրինաչափորեն դրվել հոգնակի ստորոգյալ, այդ թվում՝ հոգնակի ստորոգելով. «Դրա ապացույցը վերջին ամիսների իրադարձություններն են» (ԳԹ, 20. V. 1988): «Այնպես որ այս աշխարհի ամենաանձեռնմխելի անկյունը մեր հողմածեծ ավազուտներն են» (ՀԽՆ, 66): Այսպիսի կապակցություններում ենթակայի դերում հանդես եկող գոյականը կամ այլ խոսքի մասով

⁹ Մ. Ա. Բ. Ղ. յ ա ն, նշվ. աշխ., էջ 416:

արտահայտված բառը, չլինելով հավաքական, ձեռք է բերում հասկացական ծավալի ընդլայնում, և դա հնարավորություն է տալիս, որ ստորագրված և առհասարակ ստորագրվող նրա հետ կապվի հոգնակի թվով:

Պատճառահետևանքային տեսակետից կան առավել մասնավոր հետաքրքրական երևույթներ: Միևնույն բառը ենթակայի գերում գործածվելիս կարող է առաջ բերել համաձայնության տարբեր յուրահատկություններ՝ պայմանավորված նրա՝ տվյալ կիրառության իմաստային հատկանիշով: Այսպես, ամբողջ բառը, ինչպես նկատել է Ս. Աբրահամյանը, կարող է ցույց տալ և՛ մեկ առարկայի ամբողջություն, և՛ առարկաների քանակական ամբողջություն¹⁰: Այս իմաստով էլ պայմանավորված, դրա հետ ստորագրվող կարող է գրվել եզակի կամ հոգնակի թվով: Օրինակ՝ «Լիճը ճեղք տվեց, ջուրը սկսեց հոսել, և ամբողջը դատարկվեց երկու օրում»: «Դա դրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են» (ՀԼԳԴ, 1987, № 5, էջ 34): Այս օրինակում ամբողջը նշանակում է «բոլորը»:

Ենթակայի բազմակի լրացումները ևս այս հարցում որոշակի դեր են կատարում: Դիտենք հետևյալ օրինակը. «Կոմիտասի իրավացի բնորոշմամբ հայ հոգևոր և ժողովրդական երաժշտությունը քույր ու եղբայր են» (ՍՀ, 4. IV. 1988): Այստեղ գոյական հարադիրներով եզակի ստորագրված ունի հոգնակի դիմավոր բայ, որովհետև եզակի թվով վերացական գոյական ենթական՝ երաժշտությունը, իր մեջ պարունակում է բազմակի ենթականեր, այն է՝ եռզևուր երաժշտություն և ժողովրդական երաժշտություն իմաստները: Երբեմն համազոր ենթակաները իմաստով մոտենում են հարադիրությանը, և այդ դեպքում ստորագրվող կարող է դրվել եզակի թվով. «Ամենքին թվում է, թե իմ ասածն ու արածը կատակ է» (ՀԽՍ, 48):

Թվային համաձայնություն գոյություն չունի, եթե ստորագրված արտահայտված չէ գոյականով կամ գոյականաբար գործածված բառով: Օրինակ՝ «Թեև աղբյուրն չի մատնեցրել» (ԱԲ, 157): «Գիտուն, խորամանկ, հարուստ ու հպարտ են եղել նախնիների արքաները» (ԵԶ, 29): «Փափաղանի լեզուն և ոճը ողբերգական են, երբեմն՝ քնարական, երբեմն էլ՝ հեգնախառն» (ՍԳ, 1988, № 1, էջ 137): Ինչպես երևում է օրինակներից, բազմակի և հոգնակի ենթակաների հետ ածական ստորագրված չի համաձայնել, մնացել է անփոփոխ, երկու դեպքում էլ համաձայնությունը իրացվել է դիմավոր բայի միջոցով, այն է՝ էին, են, քանի որ ածականին բնորոշ չէ թվի քերականական կարգը: Բայց՝ «Պատմությունը, անցյալը, ժողովրդի կենսագրությունը դառնում է «կիրառական» հատկապես սերունդների միջև գոյություն ունեցող կապի շնորհիվ» (ՍՀ, 1988, № 3, էջ 16): Այստեղ բազմակի ենթականերից վերջինը՝ կենսագրությունը, իր մեջ ունի նախորդ ենթակաների իմաստը և նպաստում է, որ դառնում է վերացական բայը դրվի եզակի թվով:

Ամփոփելով նշենք, որ համաձայնության կարգը, լինելով շարահյուսական, հանդես է բերում տարբեր յուրահատկություններ՝ պայմանավորված թե՛ ենթակայի ու ստորագրվող արտահայտության միջոցների իմաստային հատկություններով, թե՛ երբեմն խոսողի վերաբերմունքով: Ավելացնենք նաև, որ ենթակայի և ստորագրվող համաձայնության օրինաչափությունները գնալով ավելի են կայունանում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա—Առողջապահություն (ամսագիր):

ԱԲ—Ակսել Բակունց, Երկեր, հ. 1, Երևան, 1976:

Գ—Գարուն (ամսագիր):

ԳԲ—Գրական թերթ:

ԵԶ—Նդիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1966:

¹⁰ Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 138—139:

- ՀԹ—Հովհաննես Թումանյան, Երկեր, Երևան, 1978;
 ՀԳԴ—Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում (ամսագիր);
 ՀԽԽ—Հայկ հալատրյան, հաշիւաշ, Երևան, 1987;
 ՀԽՎ—Հայկ հալատրյան, Վանատուր, Երևան, 1978;
 Ե—Երվանդադե, Քառս, Երևան, 1976;
 ՊՐՀ—Պատմա-բանասիրական հանգես (ամսագիր);
 ՍԳ—Սովետական գրականություն (ամսագիր);
 ՍԿ—Սիլվա Կապուտիկյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1973;
 ՍՀ—Սովետական Հայաստան (թերթ);
 ՍՀ—Սովետական Հայաստան (ամսագիր);
 ՎԳ—Վահագն Դավթյան, Երկեր, հ. 1, Երևան, 1985:

СОГЛАСОВАНИЕ ПОДЛЕЖАЩЕГО И СКАЗУЕМОГО В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. Г. БАРСЕГЯН

Р е з ю м е

В современном армянском языке число сказуемого часто обусловлено семантическими особенностями подлежащего (особенно местоименных подлежащих) и наличием в его составе личных и притяжательных артиклей, формальными или семантическими особенностями определителей, семантической и частиречной характеристикой предикатива, порядком подлежащего и сказуемого и другими обстоятельствами.

Выраженное собирательным существительным подлежащее, как правило, требует сказуемого в единственном числе. Подлежащее в единственном числе, имеющее определение, выраженное числительным, требует сказуемого и в единственном, и во множественном числе, в зависимости от актуализации подлежащего (употребление с определяющим артиклем или без него).

CONCORD OF SUBJECT AND PREDICATE IN MODERN ARMENIAN LANGUAGE

A. G. BARSEGHIAN

S u m m a r y

The number of predicate is often conditioned by the semantic peculiarities of subject (especially of pronoun subjects) and by the presence in its composition of personal and possessive articles, by formal or semantic peculiarities of definitions, by semantic and frequent speech characteristic of predicative, by the order of subject and predicate and other circumstances.

Subject, expressed by a collective noun, as a rule, demands a predicate in singular. Subject in singular, having an attribute expressed by numeral, demands a predicate both in singular and in plural in dependence of actualization of subject (application with a definite article or without it).